



207. ԳԱԶԱԼԸ, ԻՐ ՀԱՅՐԻ ՈՒ ԽԱՆԸ

Մի գյուղացու մի քաշալ տղա է լինում, ծուլլ ու անբան, բայց շատակեր Մի օր հայրը ծեծում է և զոռով եղներն առաջն անում, ուղարկում վարի, Քաշալը զնում է գութանը լծում ու հենց առաջին ծերը ծրելիս, մի ոսկե աղյուս է դուրս գալիս: Քաշալը շատ է ուրախանում, նստում է տոպրակի հացերն ուստում, եղներն արձակում, ոսկե աղյուսը տոպրակի մեջ զնում, առնում է գիշարկն ու քնում:

Դյուլից հայրը տեսնում է, որ քաշալը վար չի անում: Զայրացած գալիս է քաշալին արթնացնում, որ ծեծի, քաշալը հայտնում է հորը, որ ոսկե աղյուս է դտելի Հայրը ոսկին առնում է ու քաշալին ասում.—Էլ քեզ չեմ բանեցնելու, գիտ ու ազատ քեզ արա:

Քաշալը մի քանի օր իր համար ման է գալիս: Մի օր էլ հայրը դարձյալ ծեծում է նրան, թե զնա ու աշխատանք արաւ Երր տանը ոչ ոք չի լինում, քաշալը գողանում է ոսկե աղյուսը և գնում տոպրակի մեջ, ինքն իրեն վճռելով, որ տանի տա խանին:

Խանը ապրում էր մոտակա գյուղում: Քաշալը զնում է գյուղամեջ և հայտնում գյուղացիներին, որ ով վաղը առավոտյան զնալու է խանի մոտ գանգատ, թող գիշերս զնալիս մեր երդով ինձ էլ ձեն տա, ես էլ բան ունեմ ասելու խանին:

Երիկունը քաշալը տոկե աղյուսով պարկը զնում է գլխատակին ու քընում: Երր մայրը գալիս է, հարեւանները նրան հայտնում են, որ վաղը քաշալը զնալու է խանի մոտ գանգատ: Մայրը գալիս է ստուգում, տեսնում աղյուսն իր տեղը չի, ձեռաց գլխի է ընկնում, որ քաշալն է գողացել: Գնում է ստուգում, տեսնում քաշալի գլխի տակ: Գնում է մի հասարակ կավե աղյուս, որը նույն շափի էր,

ինչ ոսկումը, բերում, զգուշորեն դնում է քաշալին տոպրակում և նույն զգուշությամբ էլ հանում ուսկե աղյուսն ու թաքնում:

Հուսադեմին խանի մոտ գնացողները գալիս են ու կանչում քաշալին, որ ինքն էլ գա: Թաշալը տոպրակը շալակում է, զրսից շշափում բեռն ու գնում, ճանապարհին պարծենալով, որ իր բեռն ամենից թանկարժեքն է, ու խանին նվեր է տանում:

Երբ խանի մոտ բոլորն իրենց գանգատն են անում պրծնում, հերթը հասնում է քաշալին:

—Դու ի՞նչ ունես, քաշալ,—հարցնում է խանը: Թաշալը տոպրակն ուսիրց ցած է իշեցնում ու ասում.

—Մ՛զ խան, քեզ համար մի թանկագին նվեր եմ բերել, ասա կնոքդ, թող արծաթե սինին բերի, որ դնեմ վրեն: Խանը զարմանում է, թե ի՞նչ պիտի լինի, որի համար իր կինն ու արծաթե սինին են հարկավոր:

—Մ՛նչ, արծաթե սինու բա՞ն ունես, դե բաց:

—Դու ասա թող կինդ բերի, ես կասեմ,—պատասխանում է քաշալը:

Խանը հրամայում է՝ կատարեն քաշալի պատվերը: Երբ խանի խանումը շադրան երեսին, արծաթե սինին ձեռքին մոտենում է քաշալին, քաշալը հանդիսավոր կարգով տոպրակից հանում է աղյուսը և դնում արծաթե սինու մեջ: Բոլորը զարմանում են, տեսնելով կավե աղյուսը: Թաշալն ինքն էլ է շատ զարմանում, բայց արդեն ուշ է:

Խանը բարկանում է և հրամայում քաշալին բանտարկեն: Թաշալին մարագն են անում: Պահակը դրսից տեսնում է, որ քաշալը ներսում չափումներ է անում: Պահակն այդ մասին հայտնում է խանին: Խանն իր մոտ է կանչում քաշալին և հարցնում, թե ինչ էր անում և ինչ է նրա գանգատը:

Խան, ես քո ու իմ խելքն էի շափում, իմը քոնից միշտ մի մատ ավել էր դուրս գալիս:

Բարկանում է խանը և հրամայում նորից մարագն անել քաշալին ու ծխով լցնել: Հրամանը կատարվում է: Սխից խեղզվելով, հայ-հայ է անում քաշալը: Խանը հրամայում է իր մոտ բերել: —Այ տղա, —ասում է նա, —դու խելքդ կորցրել էիր, ծովսը խելքդ ետ բերած կլինի, ասա տեսնեմ ինչ էր գանգատդ Քաշալը ծխից կըս-կըծացող աշքերը տրորելով, ասաց: —Խան, իմ գանգատն էն ա, որ ասում եմ դու խան տեղովդ էտ դաշաթդ արել ես, էլ անես ոչ, ծովսը մարդու խելք չի բերի, ծովսը մարդ կխեղդի, —ասում է քաշալն ու փախչում: